ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.12.2014թ.
233-ի 5

ՀՀ պաշտպանության նախարար
պարոն Սեյրան Օհանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Օհանյան,

Մեզ է դիմել Aysor.am կայքի գլխավոր խմբագիր Սոնա Մարտիրոսյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկատվություն ստանալու հարցում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

1. Վերջին՝ առնվազն 5 տարիներին Հայաստանի Հանրապետության (Արցախ) զինված ուժերում կորուստների վերաբերյալ քանակական տվյալներ, ինչպես նաև՝ դրանց պատճառները՝ յուրաքանչյուր դեպքի հետ կապված:
2. Տրամադրել նույն ժամանակահատվածի համար նմանատիպ դեպքերի քանակական պատկեր՝ ադրբեջանական բանակում, եթե իհարկե, ՀՀ ՊՆ-ն տնօրինում է այդ տեղեկությունը:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան